




Մ Ի Օ Ն

ՈՒԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻԻ 3.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՐՏ 31
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Ո Ր Դ Ի Ք Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Աբրահամյան յանուն
Մատուցող որդւոց խօսելով կ'ասէ .
«Միտարհը բնաւ չը ճանաչեր զմեզ .
վասն զի չը ճանաչեց նա զՄատուցող
խիստ պարզ եւ խիստ վսեմ է այն
խօսքն , վասն զի կը բացատրէ թէ ինչ
պայման պէտք է Մատուցող որդիու-
թեան համար . Մատուցող որդիքը ճա-
նաչելու համար՝ անշուշտ պէտք է
ինքնին Մատուցող որդի լինիլ . իսկ Մա-
տուցող որդի լինելու համար՝ հարկ է
նախ զՄատուցող ճանաչել , այն է նո-
րա առ մարդն ունեցած խորհուրդնե-

րն , նորատակներն եւ բարութիւնն ի
մանալ : Այս , որ չը կամեցաւ զՄա-
տուցող իրեն հայր ունենալ , բնաւ եր-
բէք կարող չէ Մատուցող որդիքն իրեն
եղբայր ճանաչել . և նա , որոյ համար
մարդկային ազգի փրկութիւնը իբրեւ
գայթակղութիւն համարուած է ,
միշտ պիտի գայթակղի Մատուցող որ-
դւոց ունեցած հաւատքէն , զգա-
ցումներէն եւ ի սոցանէ ծնուած սուրբ
կեանքէն , որ հաւատոյ և սիրոյ հու-
թիւնն ու կիւրքն է :

Ամիսփեմբ մեր խօսքը . — Մատու-
ցող որդւոց յատկութիւնը թէ ամեն
կատարելութիւններէ գեղեցիկն է և

Թէ՛ միանգամայն խորին գաղտնիք նոցա համար, որք զայն զգացած չեն: Աստուծոյ որդւոյ կատարելութեամբ մէք կանոնաւոր կերեւիմք յաչս Արարչին. իսկ անկանոն և անկարգ՝ յաչս արարածոյն: Աստուծոյ որդւոյ յառ կուլթիւնը նոյն իսկ մեզ համար կը լուծէ մեր կենաց խնդիրը, և զմեզ իբրեւ անլուծանելի խնդիր մի կը ներկայացնէ յաչս աշխարհի: Աստուծոյ որդիութիւնը կը փառաւորէ զմեզ առաջի հրեշտակոց Աստուծոյ, և նա նախատելի ու ծիծաղելի կը կացուցանէ առաջի ամբօխին: Այս կը բարձրացընէ և կը խոնարհեցընէ զմեզ: Այս մի կողմէն ընդունակ կ'առնէ զմեզ մարդկային ընկերութեան և կենաց, և միւս կողմէն իբրեւ անյաջող և օտարախորթ առաջի նոյն ընկերութե՛ւ: Աստուծոյ որդին մի կողմէն առաւել է քան զմարդ, իսկ միւս կողմէն նուազ քան զմարդ: Այս հակասատկեր նկարագիրը առաջ բերելով, մեր նպատակն այն չէ, որ խօսքերու ունայն խաղով Ազուարձանամք, այլ կամիմք աւելի լաւ կերպով պատկերացնել բերստոնէից առջև իրենց կրկին վիճակէն ելած կրկնակի սրբաւորութիւնը, կամ աւելի պարզասել, իրենց երկակի կեանքին յարակից երկու վրտանքներն:

Այլ որդիք Աստուծոյ. ո՞վ որդիք 'ի մէջ օտարաց. ո՞վ ազասք 'ի մէջ գերեաց և Թագաւորք 'ի մէջ ամբօխին: Ահ, որպիսի խոնարհ և խորին առիթ երախտագիտութեան. բայց որպիսի աւտօրիայ նոյնպէս և հպարտութեան: Արդիութիւնն Աստուծոյ ոմանց համար նիւթէ խորին խոնարհութեան և ոմանց համար՝ առիթ ամբարտաւանութեան: Ըրդ, պէտք է ուրեմն, եղբարք իմ, կամ հպարտութիւնը խորոսուղէ 'ի խորս երախտա-

գիտութեան, կամ՝ երախտագիտութիւնն ընկղմել 'ի խորս ամբարտաւանութեան: Այժմէ դուք ձեզ տըրուած ՊԴԻ տիազոսին մէջ կը նշմարէք միայն անակնկալ աղատութիւն, միայն առանց ձեր արժանաւորութեան շնորհուած սրբաբեւ, միայն բողբոջին ձրի սիրոյ սրբաւորելի վերայութիւն. եթէ դուք միայն այս կերպով կը գնահատէք ձեր որդիական յատկութիւնը, անշուշտ կը լինիք խոնարհ և կուեննաք այն ամեն շնորհքները, որոց կապն ու գրաւակաւն է որդիական յատկութիւնն Պուք հեզ և խոնարհ կը լինիք. դուք կ'օրհնէք, դուք կ'աղօթէք, դուք կը սիրէք. վասն զի օրհնութիւնն, աղօթքն և սէրն կը սերմանին 'ի սիրտս հոգւով աղքատաց, որոց միայն կը պատկանին արքայութիւն Աստուծոյ և գանձք, ինչպէս ասաց Տէրն մեր (Յիսուս Քրիստոս): Այլք խոնարհ կը լինիք, դուք կ'ուեննաք ձեր որդիական տիազոսի էական յատկանիշն. դուք կը լինիք ճշմարտօպէս որդիք Աստուծոյ. ձեր հայրն կը ճանաչէ զձեզ և նորա սիրոյ և ներկայութեան զգացումն երբեք չը սպաւիր ձեռք սրտէն: Այլք խոնարհ կը լինիք, երբեք չէք տաքակուսիր և կասկածիր և ձեր հաւատարմութեան վստահութիւնը հաւատար կը լինի ձեր կամովին խոնարհութեան: Խոնարհն միայն, որովհետեւ իւր անձին չ'ապրտտանիր, միշտ իրաւունք ունի յուսալու: Եւ այց, աւանդ եթէ որդիութեան տիազոսի մէջ միայն լոկ արտօնութիւնն կը սիրէք. եթէ կը պարծիք միայն, որ նովաւ ուրիշներէն կ'ըրոջիք. եթէ երջանիկ կը համարիք զձեզ միայն այնու, որ լոկ տիազոսով ուրիշներէն կը տարբերիք. եթէ չէք ջանար հաւատոյ գործքեր ունենալ և անտարբերութեամբ կը դիտէք, երբ

Մտաւծոյ հաղարաւոր որդիներ իրենց գերադոյն տխրոյսն կ'արհամարեն և առ իսկ կը կոխեն . եթէ նոցա դժբախտութիւնը, փոխանակ տրամեցընելոյ զձեզ, դուցէ աւելի կ'ուրախացնէ, եթէ դուք այն տխրոյսն կը պարզէք իրրեւ դրոշ կուտալցութե . եթէ դուք աւելի կը բարձրացնէք այն տեսանելի պատու արներն, որք զձեզ ուրիշ մարդիկներէն կ'անջատեն, եթէ դուք ձեր խօսակցութեանց մէջ ձեր որդիական վիճակի պարտուց կատարումն թողով, լի անունը պաշտպանելով կը յամառիք . եթէ դուք տալն անգամ նախապատիւ չէք համարեր զձեզ խոնարհեցնող և միւս մարդկանց հետ կապող տխրոյսներն՝ այն տխրոյսէն որ զձեզ կը բարձրացնէ և ուրիշներէն կ'որոշէ . միով բանիւ, եթէ ձեր ուրախութիւնն հպարտութեան ուրախութիւն է և ձեր բաւականութիւնն այլոց զրկանաց և անխառնութեան բարեպաշտութիւն, լսեցէք, որ դուք անուամբ միայն որդի Մտաւծոյ էք և ոչ արդեամբք . լսեցէք և իմացէք, որ դուք մոլորութեան մէջ էք . դուք կը խափէք ձեր անձն . դուք կուրախանաք և կը հրաժուիք, ոչ իբրեւ որդի Մտաւծոյ, այլ իբրեւ յափշտակիչ այնպիսի աւնուան, որ երբէք չը պատկանիր ձեզ : Իսկ որդիք Մտաւծոյ չէք, և բնաւ եզամ չունիք : Հպարտութիւնն, առիթն առաջին անկման մարդոյ, վերադարձն անկեալ կը թողու զձեզ, թէ և Մտաւծոյ կամեցաւ յօտին կացուցանել : Հպարտութիւնն մի վատթար սրահապան և անհաւատարիմ իշխող է այն գանձուն, որ պէտք է ձեզ տրուէր : Հպարտութիւնն կը լափէ նոյն գանձն . նա կը պառչէ, իրենց առաջին բողբոջին մէջ, երախտագիտութիւնն, սէրն և ազօթքն :

Հպարտութիւնն ձեռք կը կարկառէ մինչեւ անգամ այն ուրախութեան, որ ձեր նոր հաւատոյ առաջին պտուղն էր : Հպարտութիւնն անդադար կը կրծէ այն ուրախութիւնն կասկածանաց և թերահաւատութեան ժանիքներով, վասն զի հպարտութիւնն լի է թախծութեամբ և տարակուսանք, ինչպէս խոնարհութիւնն լի է վստահութեամբ : Հպարտութիւնն երբէք չը յուսար և վստահիր, այլ միշտ կը տարակուսի և կ'երկնէ : Հպարտութիւնն դողումն կը ներշնչէ հոգւոյն և սարսափ, ուսուցանելով թողուլ ճշմարիտ ասպաւնն և յանձն ապաւինիլ : Հպարտութիւնն մերթմոյսէ մերթ մթուածան սոսկալի վայրկեաններ կուտայ մտքին, ի վերջոյ իսպառ կը խորասուզէ զայն յուսահատութեան խաւար գիշերոյն մէջ :

Իսկ պիտի ասեմք որ, միւս կողմէն եւս Մտաւծոյ որդիքն, օտարք ի մէջ աշխարհի, օտարք երբեմն ի մէջ մեր ձառորաց, վարելով այնպիսի կեանք որ զայս կը վերաւորէ, վասն զի կըսքանչացնէ . որդիքն Մտաւծոյ առանձնացեալ ի մէջ ընկերութեան, մեռացեալ ի մէջ բազմութեան, որք կը նուիրեն այլոց իրենց սիրար, բայց այլք զայն կը մերժեն և մինչեւ անգամ ատելութեան և թրշնամանաց զգացումով կը վառին . վասն զի նոցա կեանքն ու սկզբունքն իրենց կենաց սկզբանց ներհակ կը տեսնեն . որդիքն Մտաւծոյ, որք հազիւ ուրեմն սառն վստահութեան կը հանդիպին մարդկանց կողմէն, բայց ոչ երբէք կը փնտռուին, ոչ կընդունուին ոչ կը դիմաւորուին և ոչ կը սիրուին, նոքա որ միշտ կը սիրեն, նոքա որք զօրացած են Յիսուսիւ Քրիստոսիւ, և մարբուած է նորա ձեռքով իրենց սէրն ու յօժարութիւնն : Այս կողմէն

եւս ահա ուրիշ վտանգ ունին իրենց առջեւ Մատուծոյ որդիքն , այս կողմէն եւս ուրիշ որոգայթ ունին իրենց հանդէպ : Մհա կացութիւն, որ երկիցրս դժուարին է : վասն զի պէտք է սոյն փորձանաց մասնել զանձն և պէտք է միշտ զգալ զայն : Վայ այնքամ որ սաստիկ կզգայ , և վայ այնքամ որ չզգար բնաւին : Սոյն մենաւորական վիճակին մէջ , սոյն ընդհանուրէն մերժման կացութեան մէջ սաստիկ ըզգացումն կը ակարացնէ բրիստոնէա. կան քաջութիւնն և վտանգի կենթարկէ հաւատարմութիւնն , բնականաբար ընդ առաջ ելած նախանձն ու անտարբերութիւնն կը յոգնեցնեն , Մատուծոյ որդիքն կ'ենթարկուին արհամարտ և ցուրտ նայուածքներու , կարօտութիւն կզգան մարդկային ընկերակցութեան մէջ մտնելու , կը խուսափին դժուարին տեսարաններէ , որոց կ'ենթարկէ դաւանութիւնն և յուսոյ խոստովանութիւնն : Յոյս մի կը ծնանի , իբր թէ կարող ենք մարդկանց ընկերութեամբ ուրախանալ և մխիթարիլ . սէր մի կը ծնանի 'ի մեզ մարդկանց ընկերութեան մէջ մտնելու և նոցա համակերպելու : Ո՛հ , կը մտնենք մարդկանց մէջ զարկուած և կողտրտուած նոյն փառաւոր նշաններէն , որք պէտք է փայլէին իբրեւ լոյս բրիստոնէի տնձին և կենաց վերայ : Մյնուհետեւ մոռացութեան կը մատնուին որդիութեան աշուտն ու պարծանքն և հապիւ ուրիմին կը յիշուին : Այլ երբ բրիստոնէայն այս ցածութեան և նուազութեան աստիճանը կ'իջանի , այնուհետեւ ճշմարտախօսութիւնն կը կաշկանդուի , իւր սրտի խաղաղութիւնն կը վրդովի , հոգւոյ փրկութեան ճանապարհը կը փակուի նորա համար , կը նուազի նա և կը թցովանայ , և ա,

ւանդ , որովհետեւ չը կամեցաւ երեւիլ որպէս որդի Մատուծոյ , այնուհետեւ խաղառ կը դադարի նորա որդիութիւնն :

Միտք , եղբարք , վերստին կը կրօններմ , վայ այն մարդոյն , որ չզգար սոյն խայթոյն և կը վարժի մենաւոր տարիլ ընդդէմ բնութեան 'ի մէջ մարդկային գերդաստանին : Փափագելի է որ բրիստոնէայն միշտ զգայ սոյն ցաւըն , փափագելի է որ միշտ տեսէ սոյն վշտակրութիւնն : Արկնաւոր Հայրն կը փոփոխէ երկնից մէջ սոյն վիշտն , բայց աշխարհիս վերայ պէտք է որ միշտ բաց մնայ այս վէրքն : Խոնարհեցէք ամենայն հլութեամբ և ձեր անձըն Մատուծոյ նուիրեցէք : Ս'ի բնաւ լանաք երբէք անտարբերութեան և և սառնութեան , Ո՛չ ապաքէն մեր Տէրն և Վարդապետն միշտ շարժեց հասարակաց կարեկցութիւնն : Ո՛չ ապաքէն նաեւ թշնամի և հալածիչ ամբոխին մէջ նորա մարդասեր աչքերն միշտ բարեկամ մի որոնեցին : Ո՛չ ապաքէն նա միշտ ժողովրդասէր եղաւ , ժողովրդասէր ըստ նմանութեան Մատուծոյ , ընդ առաջ ելաւ ամենաւն , յինքն յանկոյց զամենեսեան , ողբաւ նօք փարեցաւ ընդ ամենեսին : Ո՛չ ապաքէն կը տեսնեմք , որ նա երբէք չը հեռացաւ ամբոխէն , չը խուսեցաւ տառապելոյնէն , չը սքողեցաւ մեծամեծներէն և չը կամեցաւ բնաւ իւր կոտորելութեամբ , որ անշուշտ գերազոյն է քան զմերն , այնպիսի դիրք բռնել որ անմատչելի լինի 'ի մարդկանէ : Ո՛չ ապաքէն այն վերջին վայրկեանին մէջ իսկ , երբ մարդիկնէրէն բռնի անջատուած կը մագլցէր 'ի լեառն Փողգոթայ , 'ի լեառն զհի , չը ջապատուած էր Արուստղէմի դըւ տերաց արտասուքներով , կը պատուիրէր նոցա իրենց և իրենց որդւոց

վերայ արտասուեւել : Այն տպագրէն առ-
տուածային վրէժխնդրութեան են-
թարկուած ժամանակն իսկ, իւր դա-
հիճներն կը նմանեցնէր տկար ձա-
գերու և տանջանաց վերջին վայրկեանին
ինքն տակաւին մայր կը հանդիսանար
նոցա : Այդպէս իմ, մինչեւ ի վերջին
ճգնաժամն բնաւ մի ցանկայք մար-
դիկներէն մենանալ, թէպէտ և դա-
տապարտեն զձեզ հեռանալ և ա-
ռանձնանալ : Թող բաժանումն երբեք
ձեր գործն չը լինի : Թող այլք արքա-
րեն զձեզ բայց դուք մի արքայէք զձեզ :
Թող այլք տարագրեն զձեզ, դուք մի
տարագրիք ինքնին : Այն պարուրիք և մի
փակուիք անձնասիրական և եսական
խաղաղութի մէջ : Ի՞նչք, խանար հեցէք
ձեր փառքէն, բայց երբեք մի ուրանաք
դայն : Ահալուորք փրկեալք շնորհօք,
խառնուեցէք մեղաւորաց մէջ, առանց
նոցա մեղաց ընկերանալու : Երբեք,
բնաւ երբեք, մի լինիք խտտափրա և
անկարեկից առ մարդիկ ձեր ապահո-
վութեան համար : Թող բրիտանի-
թիւնն բնաւ չը հանէ չը տարագրէ
զձեզ մարդկութենէն, այլ ընդհակա-
ռակն այնչափ կատարեալ մարդիկ ե-
ղէք, որչափ կատարեալ բրիտանացի-
ք : Հաստատ իմացէք, որդիք Աս-
տուծոյ, որ դուք բովանդակապէս
պիտի չը հասկցուիք և ճանաչուիք աշ-
խարհի մէջ : Առաքեալն արդէն ա-
սած է, պատճառն բացատրած եւ
և փորձն եւս արդէն ապացուցած է
դայն : Հաւատացէք և դուք Առա-
քելոյ խօսքին, բայց մի լինիք բնաւ
տգէտ և խաւարամիտ, մի լինիք ա-
ռանց խորագիտութեան, որ երբեք
չը պատկանիր բրիտանիին : Այն խառ-
նէք աշխարհային յիմարութիւնն Ա-
ւետարանի սուրբ յիմարութեան հետ :
Վասն զի այլ է աշխարհի յիմարու-
թիւնն, և այլ է Աւետարանի յիմար-

ութիւնն, որ իմաստութիւն է բո-
վանդակ : Օ՛ր յիմարն Աստուծոյ ի-
մաստնագոյն է քան զամենայն մար-
դիկ : Բանական եղէք, դիւրամատ-
չելի եղէք ամեն կողմէն, ինչպէս վա-
յելէ բրիտանիին : Ամեն յարակցու-
թիւն և ընկերակցութիւն ունեցէք,
ինչ որ կարելի է ունենալ : Հազար-
գութիւն ունեցէք ձեր եղբարց հետ
ըստ մարդկութեան : Այն թողութք որ
երկար անջատումն բառնայ ձեր սրբ-
աէն Հազարգակցութեան և ընկերակ-
ցութեան զգացումն : Օգոյշ կացէք,
որ մի գուցէ, սխալմամբ ձեր նոր ար-
ժանաւորութեան լերան վերայ մենա-
նալով, հարստութիւնն գայ գտնէ
զձեզ ձեր առանձնութեան մէջ և ի
վայր գահալիծէ զձեզ այն բարձրու-
թենէն, ոչ ի շարս ամբօխին խառ-
նելով, յորմէ դուք հեռացայք, այլ
անգոր քան զամբօխն ի վայր իջուցա-
նելով :

Ի՞նչ պէտք է առնել սոյն վտան-
գաց մէջ, յորոց մին միւսոյն մէջ կը
ձգէ : Ի՞նչ պէտք է առնել, եթէ ոչ
պաղատել և անդադար Աստուծոյ օգ-
թիւնը խնդրել սոյն փորձութեանց
մէջ, որք անընդհատ կը վերածնանին :
Աստուծոյ որդին մեծամեծ արտօնու-
թիւններ և տուաւելութիւններ ունի,
բայց ամենէն մեծն է իմանալ՝ պաղա-
տել և խնդրել : Եթէ այս պարգեւն
չունի, ի՞նչ կարող են առնել միւսներն :
Աղօթեցէք ուրեմն, որ Աստուծոյ չը-
նորհքն ձեզ համար չը փոխուի յորո-
գայթ ամբարտաւանութեան : Աղ-
թեցէք որ շնորհքներն անընդհատ ի-
րարու յաջորդին և մի զմիւսն հաս-
տատեն, ամբայնեն և յարատեւեն :
Աղօթեցէք որ ճշմարիտ Աստուծոյ որ-
դիք լինիք, հաւատով խանարհ, սի-
րով հաստատուն, յուսով անյողողող,
հեզ և փոքրիկ այն ձեռքին մէջ, որ

որ զձեզ կը բարձրացնէ և կը մեծացը
նէ : Հող և փոշի համարեցէք զձեզ
ու միայն ամենափոքրիկ հաւատացե-
լոյն հետ , աղ նսեւ ամենափառ ան-
հաւատին , միտլ բանիւ , լերուք ջինջ
հայեւիներ Մասուճոյ Սիւսի Որդ-
ւոյ պատկերին , որ ինքնին կեանք էր ,
և դուք միայն նովաւ կեանք ունիք ,
որ ունէր անուանահամեմատ քան զա-
մենայն անուան , և ստիպոյն հեզ էր և
խոնարհ սրտիւ և մարդկանց սիրոյն
համար . « Օրոնձն ունայնացողց , զկեր-
պորանս ծառայի տաւալ , ի նմանու-
թիւն մարդկան եղեալ և կերպորանօր
գտեալ իբրեւ զմարդ » , Փիլ . Բ . 6 :

(Շարունակիւն .)

ԱՆՅՔ ՄԵԾԻՆ ՆԱՓՈԼԻՈՆԻ ԸՆԴ ՆԻԵՄԵՆ ԳԵՏ

Յունիս 23ին դեռ օրը չը ծագած
կայսերական զօրախումբը Նիեմեն հա-
տաւ . բայց առանց զայն տեսնելու :
Բրուսական անտառի մը եզրը և գե-
տը չը ջապատող բլուրները՝ կը ծածկե-
ին այն մեծ բանակը , որ պատրաստ
էր անկից անցնելու :

Նափողէն՝ որ մինչեւ այն տեղ
կառքով եկած էր՝ առաւօտեան ժամը
երկուքին (ըստ Եւրոպայուց) ձի կը
հեծնայ : Արսեն թէ առանց ինքը
զինք ծածկելու ճանչցաւ ռուսա-
կան ափուները . բայց ստոյգը սա է որ՝
սահմանագլուխը անցնելու համար
գիշերուան խաւարով ծածկուեցաւ .
ինչպէս հինգ ամիս ետքն ալ նոյն խա-
ւարի շնորհիւ միայն նոյն տեղէն վե-
րագարծաւ : Այս եղբրքին վերայ ե-
րեւցած միջոցին յանկարծ ձին գլորե-
ցաւ և զինքը ձգեց դեռի եղբրքին

վրայ : Չայն մը լուեցաւ , որ գոցեց .
« Չարագուշակ է այս . հռոմայեցի մը
ըլլար՝ ետ կը գառնար » : Յայտնի չէ
թէ լսողը ինքն էր , թէ հետը եղող
ներէն մէկը :

Զննութիւնը կատարուեցաւ , հը-
րամայեց որ՝ երկրորդ օրուան խոնար-
հելու ժամանակը Բօնիեմեն գիւղին
մօտ գետին վրայ երեք կամուրներ
ձգուին . յետոյ իւր բանակաւորը քա-
ջուեցաւ , ուր անցուց այս ամբողջ օ-
րը մերթ իւր վրանին տակ . մերթ ու-
րմեան տան մը մէջ , դժնդակ տաքու-
թեան մը ներքեւ բոլորովին անշարժ
և ուժ-թափ տարածուած , և ի դուր
հանգիստ ինդրելով :

Երբ գիշերը հասաւ , գետին մեր-
ձեցաւ , որուն վրայէն նաւակով մը
բանի մը խրամահատներ անցան : Լի
զարմացմամբ և անարգել ռուսական
ափանց վրայ ոտք կոխեցին : Հոն խա-
ղաղութիւն գտան . պատերազմը մի-
այն իրենց կողմէն էր . ամենայն ինչ
խաղող էր այս օտար երկրին վրայ ,
որ այնչափ սպառնալից նկարագրուած
էր իրենց : Սակայն գիշերսպահ խումբ
բի մը հրամանատար Պաղոք պարզ
պաշտօնակալ մը իսկոյն ներկայացաւ
անոնց : Ասիկա առանձնակի էր . ինքը
բոլորովին անվրդով խաղաղութեան
մէջ կ'երեւէր , և չէր գիտեր որ՝ ամ-
բողջ զինեալ Եւրոպան իւր դէմն
էր : Կը հարցնէ այս օտարականաց թէ
ո՞վ են իրենք . և անոնք կը պատասխա-
նեն . « Պաղղիացի ենք » : Ինչ կու-
ղէք . կը հարցնէ գարձեալ պաշտօնա-
կալն , և ինչո՞ւ Ռուսաստան եկած էք :
« Յանկարծ խրամահատ մը շտապաւ
կը պատասխանէ . Չեղ դէմ պատե-
րազմելու , Վիլնան առնելու , Բոլոնի-
ան աղատելու » : Այս խօսքերուն վե-
րայ Պաղաքը ետ կը քաջուի , և անե-
րեւոյթ կըլլայ անտառներու մէջ , դէպ